ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ

16.09.2019Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 10 անդամները:

Բացակայում են Մ.Գասպարյանը, Ն.Վարդանյանը, Հ.Գրիգորյանը, Ա.Գասպարյանը,Կ.Դավթյանը :

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝
Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը , Ա. Ծերունյանը , Ա.Զաքարյանը և գյուղերի վարչական ղեկավարները:
Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Ձեզ եմ ներկայացնում համայնքի ավագանու թիվ 6 հերթական նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի «Զանգակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակելու համար Չարենցավան համայնքի ղեկավարի ներկայացրած թեկնածուին համաձայնություն տալու մասին:
2. Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 80 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
3. Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 81 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
4. Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 87-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին;
5. Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի ապրիլի 05-ի թիվ 32-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
6. Քաղաքացու անվամբ գրանցված 07-019-0644-0001 կադաստրային ծածկագրով 0.27993285 հա բնակավայրերի նշանակության հողամասի 0.17252387 հա-ը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:
7. Համայնքի անվամբ գրանցված 07-015-0005-0070 կադաստրային ծածկագրով 0.00954 հա բնակավայրերի նշանակության հողամասը քաղաքացի Սարգիս Եղիազարյանի սեփականությունը ճանաչելու մասին:
8. Չարենցավան համայնքի սեփականություն համարվող հողամասերը մրցութային կարգով վարձակալության տրամադրելու, ուղղակի և աճուրդային կարգով օտարելու մասին:
9. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող ք.Չարենցավան 4-րդ թաղամաս 10-րդ ա շենք թիվ 4 ոչ բնակելի տարածքը աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու մասին:
10. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
11. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

Կողմ -10 դեմ - 0 ձեռնպահ -0

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. ***Զարենցավան համայնքի «Զանգակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակելու համար Զարենցավան համայնքի ղեկավարի ներկայացրած թեկնածուին համաձայնություն տալու մասին:***

/Զեկ. Ս.Մուրադյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, ***առաջարկում եմ*** համաձայնություն տալ «Զանգակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակելու համար Զարենցավան համայնքի ղեկավարի ներկայացրած՝ Անահիտ Հրաչիկի Միրզոյանի թեկնածությանը:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2. ***Զարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 80 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:***

/Զեկ. Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հաշվի առնելով առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվատման ու հավաքագրման բաժնի պետ Վ.Բարսամյանի զեկուցագիրը՝.***առաջարկում եմ,*** Զարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի «Զարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի 2019 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 80 որոշման հավելվածի 64-րդ տողի «10,5» թիվը փոխարինել «11,5» թվով.

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3. Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 81 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկ. Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով Չարենցավան համայնքի ղեկավարի օգնական Գ.Գրիգորյանի և աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի պետ Ա. Զաքարյանի զեկուցագրերը և «Մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն» ՀՈԱԿ-ի տնօրեն Կարինե Օհանյանի 2019թվականի սեպտեմբեի 12-ի թիվ 2910/04 գրությունը,***առաջարկում եմ*** .Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի «Չարենցավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2019 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 81 որոշման 1-ին, 2-րդ, 5-րդ, 7-րդ և 9-րդ հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

4.Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 87-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկ. Գ.Աֆյան/

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով՝ հաշվի առնելով, «Մշակույթ» ՀՈԱԿ-ի տնօրեն Ա.Աբգարյանի 2019թվականի հուլիսի 18-ի թիվ 2251/04, քաղ., ճարտ.,գյուղ. և բնակկոմ. տնտես. բաժնի պետ Բ. Բալբաբյանի 2019 թվականի օգոստոսի 26-ի թիվ 2748/04, օգոստոսի 28-ի թիվ 2784/04, օգոստոսի 29-ի թիվ 2790/04, սեպտեմբերի 03-ի թիվ 2819/04, կրթ., մշ., սպ. երիտ. և սոց. աջակցության բաժնի պետ Ա. Զաքարյանի 2019 թվականի սեպտեմբերի 03-ի թիվ 2828/04 և ֆինանսատնտեսագիտական ևգնումների կազմակերպման բաժնի պետի ժ/պ Գ.Աֆյանի 2019 թվականի թիվ 2842 զեկուցագրերը. ***առաջարկում եմ*** կատարել լրացումներ և փոփոխություններ 2019 թվականի հաստատված բյուջեում:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

5. Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի ապրիլի 05-ի թիվ 32-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկ. Ա.Ծերունյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ Կոտայքի մարզպետի 2019 թ. հունիսի 04-ի թիվ 01.1/08.2/03895-19 գրությունը՝առաջարկում եմ հաստատել Չարենցավան համայնքի 2018-2022 թվականների զարգացման ծրագրի մեջ կատարված փոփոխությունը՝ կապված աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների ներառման հետ, համաձայն N N 1,2 հավելվածների:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

6.Քաղաքացու անվամբ գրանցված 07-019-0644-0001 կադաստրային ծածկագրով 0.27993285 հա բնակավայրերի նշանակության հողամասի 0.17252387 հա-ը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

/Զեկ. Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի պահանջներով, նկատի ունենալով, որ հողերի քարտեզագրման և չափագրման ժամանակ համայնքային սեփականություն հանդիսացող 07-019-0644-0001 կադաստրային ծածկագրով 0.27993285 հա բնակավայրերի նշանակության հողամասի 0.17252387 հա-ը սխալմամբ գրանցվել է որպես քաղաքացու սեփականություն.***առաջարկում եմ*** հողերի քարտեզագրման և չափագրման ժամանակ սխալմամբ որպես քաղաքացու սեփականություն գրանցված 07-019-0644-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նշանակության 0.27993285 հա հողամասի 0.17252387 հա-ը ճանաչել Չարենցավան համայնքի սեփականությունը /կից ներկայացվում է հողամասի հատակագիծը/:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

7.Համայնքի անվամբ գրանցված 07-015-0005-0070 կադաստրային ծածկագրով 0.00954 հա բնակավայրերի նշանակության հողամասը քաղաքացի Սարգիս Եղիազարյանի սեփականությունը ճանաչելու մասին:

/Զեկ. Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի պահանջներով, նկատի ունենալով, որ հողերի քարտեզագրման և չափագրման ժամանակ քաղաքացու սեփականություն հանդիսացող 07-015-0005-0070 կադաստրային ծածկագրով 0.00954 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը սխալմամբ գրանցվել է որպես համայնքային սեփականության բնակավայրերի այլ. ***առաջարկում եմ***. հողերի քարտեզագրման և չափագրման ժամանակ սխալմամբ Արզական համայնքի անվամբ գրանցված 07-015-0005-0070 կադաստրային ծածկագրով 0.00954 հա բնակավայրերի նշանակության հողամասը ճանաչել Սարգիս Եղիազարյանի սեփականությունը:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

8. Չարենցավան համայնքի սեփականություն համարվող հողամասերը մրցութային կարգով վարձակալության տրամադրելու, ուղղակի և աճուրդային կարգով օտարելու մասին:

/Զեկ. Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 48-րդ, 66-րդ և 67-րդ հոդվածներով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ ***առաջարկում եմ*** թույլատրել Չարենցավան համայնքի սեփականություն համարվող հողամասերը մրցութային կարգով վարձակալության տրամադրելու, ուղղակի և աճուրդային կարգով օտարելու՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

9.Զարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող ք.Զարենցավան 4-րդ թաղամաս 10-րդ ա շենք թիվ 4 ոչ բնակելի տարածքը աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկ. Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ տնտեսության բաժն պետի զեկուցագիրը, «Արմէքսպերտիզա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնահատման հաշվետվությունը.առաջարկում եմ թույլատրել աճուրդային կարգով օտարելու Զարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող Կոտայքի մարզ ք.Զարենցավան 4-րդ թաղամաս 10Ա-րդ շենք թիվ 4 ոչ բնակելի տարածքը՝ մեկնարկային գինը սահմանելով տասնհինգ միլիոն երեսուն հազար ՀՀ դրամ (հիմք վկայական 05042019- 07-0051, 262.7քմ մակերեսով) :

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

10. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:

/Զեկ. Գ.Ամֆյան/

Հաշվի առնելով Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 2-րդ թաղ., 8 շենքի 10 հասցեի բնակիչ ***Սեդա Ենոքյանի*** 2019 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 2879-16, դիմումը ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ ***առաջարկում եմ*** Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 100.0 հազ. դրամ հատկացնել ***Սեդա Ենոքյանին:***

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը

Կողմ-10 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Բաբայան Վալերի

Բաբայան Նարեկ

Սահակյան Երեմ

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Փանոսյան Արթուր

Երիցյան Գագիկ

Եփրեմյան Տարոն

Խլղաթյան Արսեն

Պողոսյան Մնացական

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Նիստն արձանագրեց Ս.Մուրադյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ.Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**